Վահան Տերյան

Հեռավոր, անել լեռնագագաթներ

Հեռավոր, անել լեռնագագաթներ,
Պայծառ արևի գահեր հիասքանչ,
Սիրտըս մեռնում է, լեռնագագաթներ,
Ներքևում նիրհող դաշտերում կանաչ:
Իմ երազները ձեր գիրկն են թռչում
Բա՛ռձր, դեպի վե՛ր, արեգակին մոտ,
Ուր խենթ բոցերի խուրձեր դողդոջուն
Լուռ դալկանում են երկնում անաղոտ:
Հեռո՛ւ, օ՛, հեռո՛ւ այս ունայնաշունչ
Տխուր դաշտերից, հանդարտ ու անկյանք.
Գրկի՛ր ինձ, անել գագաթների շունչ,
Սիրտըս բորբոքի՛ր, բարձրության բերկրանք:
Թող իմ աչքերը լույսից կուրանան,
Թող սիրտըս լցվի արևի բոցով.
Օ՛, երջանկություն անել բարձրության,
Լուսեղեն երկնի անեզրական ծո՛վ...

1907-1908